ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«19» «նոյեմբերի» 2020 թ. № 444-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N360-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Անտառային կոմիտեի» գործունեության համակարգման հետևյալ բաշխումը.

1) շրջակա միջավայրի նախարար Ռ.Պետրոսյան՝

ա. հասարակայնության հետ կապերի բաժին,
բ. առաջին բաժին,
գ.«Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

2) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տ. Սիմոնյան՝

ա. կլիմայի քաղաքականության վարչություն,
բ. մթնոլորտային քաղաքականության վարչություն,
գ. ջրային քաղաքականության վարչություն,
դ. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,
ե. լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնությունների վարչություն,
զ. իրավաբանական վարչություն,
է. անտառային քաղաքականության վարչություն,

ը. հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,
թ. Անտառային կոմիտե,
ժ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ժա. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

3) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մազմանյան՝

ա. ռազմավարական քաղաքականության վարչություն,
բ. միջազգային համագործակցության վարչություն,
գ.բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,
դ.«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ե. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
զ.«Դիլիջան» ազգային պաիկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
է.«Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ը.«Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
թ. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն;
ժ.«Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ժա.«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

4) շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Գ. Գույլան՝
ա. ֆինանսատնտեսական վարչություն,
բ. քարտուղարություն,
գ. մարդկային ռեսուրսների կառավարման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, անտառայն կոմիտեի, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի գործունեության համակարգման մասին» N360-Լ հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

11/19/2020

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«19» նոյեմբերի 2020 թ.
ք. Երևան